



### Ի՞նչ է Stimulus Check-ը:

Stimulus Check-ը գումար է, որը կառավարությունը տալու է անհատներին և ընտանիքներին օգնելու նրանց COVID-19-ի ճգնաժամի ընթացքում:

### Ի՞նչ պետք է ես անեմ ստանալու համար stimulus check-ը:

Ինչպե՞ս եմ ես ստանալու Stimulus Check-ը: Եթե դուք ֆայլ եք արել 2018 կամ 2019 թվականների եկամտահարկերը, ապա դուք կարիք չունեք անելու որևէ քայլ: IRS-ը կուղարկի ձեզ stimulus check-ը:

Եթե դուք ստանում եք որևէ օգնություններ Սոցիալական Անվտանգությունից (SSDI, SSI, etc), կամ Railroad Retirement-ի օգնություններ, դուք կարիք չունեք որևէ բան անելու: IRS-ը կուղարկի ձեզ ձեր աջակցության չեքը:

Սակայն, եթե դուք ստանում եք այս օգնությունները և դուք ունեք կախյալ անձինք, դուք պետք է լրացնեք այս ձևը՝ ստանալու համար հավելյալ գումար ձեզանից կախվածների համար: Սոցիալական Անվտանգության և Disability (SSDI) և Railroad օգնությունների ստացողների համար ձևը լրացնելու վերջնաժամկետը ձեզանից կախյալ անձանց համար Ապրիլի 22-ի ժամը 9-ն է: SSI և Veteran-ի օգնություններ ստացողների համար դեռևս չի հայտարարված, բայց շուտով կլինի: Ֆայլ արեք հնարավորինս շուտ:

Ի՞նչ կլինի, եթե ես չեմ ֆայլ արել 2018 կամ 2019 թվականների եկամտահարկերը և ես ստացել եմ որոշ եկամուտ աշխատանքից: Եթե դուք միայնակ եք և ձեր եկամուտը բարձր է քան \$12,200-ը, դուք պետք է ֆայլ անեք ձեր 2019 թվականի եկամտահարկերը հանրավորին չափ շուտ: Եթե դուք ամուսնացած եք և ձեր եկամուտը բարձր է քան \$24,400-ը, դուք պետք է ֆայլ անեք ձեր 2019-ի եկամտահարկերը հնարավորին չափ շուտ: Եկամտահարկերը ֆայլ անելու վերջնաժամկետը երկարացվել է մինչև 2020 թվականի Հունիսի 15-ը: Բայց եթե դուք չեք կարող ֆայլ անել անմիջապես, դուք դեռևս կարող եք ստանալ ձեր stimulus check-ը մինչև 2020 թվականի Դեկտեմբերը:

Եթե դուք ունեք շատ ցածր եկամուտ, բայց դուք ստացել եք ամենաքիչը \$1 աշխատանքից, դուք պետք է մտածեք

եկամտահարկ ֆայլ անելու մասին, որովհետև stimulus check-ին ավելացրած դուք հնարավոր է իրավասու լինեք ստանալու Earned Income Tax Credit (EITC):

Ի՞նչ կլինի եթե ես չեմ ֆայլ արել եկամտահարկեր 2018 կամ 2019 թվականներին, որովհետև ես շատ ցածր եկամուտ ունեմ կամ չեմ ստացել որևէ գումար:

Եթե դուք միայնակ եք \$12,200-ից ցածր եկամուտով կամ եթե դուք ամուսնացած եք \$24,400-ից ցածր եկամուտով, դուք պետք է օգտագործեք անվճար առցանց ձևը ստանալու համար Stimulus Check-ը՝ <https://www.freefilefillableforms.com/#/fd/EconomicImpactPayment>

IRS-ը կզանգի՞ ինձ որևէ հարց տալու իմ եկամտահարկերը ֆայլ անելուց կամ առցանց ձևը լրացնելուց հետո:

Ոչ: IRS-ը չի զանգի ձեզ հարցնելու համար ձեզ որևէ անձնական տեղեկություն կամ ձեր բանկի հաշվի համարը: Դուրս մի տվեք այս տեղեկությունը որևէ մեկին, ով կզանգահարի ձեզ: Սա խաբեություն է:

### Որքա՞ն գումար ես կստանամ:

Որքա՞ն stimulus գումար ես կստանամ: Դուք կստանաք \$1,200 եթե դուք միայնակ եք և ստացել եք \$75,000-ից քիչ մինչև եկամտահարկերը: Դուք կստանաք \$2,400 եթե դուք ամուսնացած եք և հանձնել եք միասին և ստացել եք \$150,000-ից քիչ: Դուք կստանաք \$1,200 եթե դուք ֆայլ եք արել որպես ընտանիքի գլխավոր անդամ և ստացել եք \$112,500-ից քիչ:

Դուք կստանաք փոքր stimulus check կամ ոչ մի stimulus գումար՝ եթե դուք ստացել եք ավելի քան այս գումարները:

### Կստանա՞մ ես ավել գումար, եթե ես երեխաներ ունեմ:

Դուք կստանաք \$500 յուրաքանչյուր երեխայի համար որպես կախյալ անձ, եթե երեխան 17-ից ցածր է և ունի սոցիալական ապահովության համար: Տեսեք այստեղ թե ով կարող է կոչվել որպես կախյալ անձ՝ <https://www.irs.gov/help/ita/whom-may-i-claim-as-a-dependent>

## Ինչպե՞ս ես կստանամ գումարը:

### Ինչպե՞ս ես կստանամ գումարը:

Internal Revenue Service (IRS)-ը կփոխանցի գումարը բանկի հաշվեհամարին, որը նշված է ձեր 2018 կամ 2019 եկամտահարկերում կամ հատուկ IRS-ի ձևում: Եթե դուք չեք տվել IRS-ին բանկի հաշիվ, IRS-ը ձեզ փոստով կուղարկի չեք ձեր նշած հասցեին:

### Ինչպե՞ս ես կստանամ դրամը, եթե ես ստանում եմ Սոցիալական Անվտանգության, Railroad կամ Veteran-ի օգնություններ:

Որևէ մեկը, ով ստանում է օգնություններ Սոցիալական Անվտանգության, Railroad կամ Veteran-ի օգնություններ, անկախ նրանք ֆայլ են անում եկամտահարկեր կամ լրացնում են IRS-ի ձևը, կստանան \$1,200 մինչև Ապրիլի վերջը նույն ձևով ինչպես դուք ստանում եք այս օգնությունները: Ստուգեք ձեր ավանդը (deposit) կամ չեք:

Բայց, եթե դուք ստանում եք այս օգնությունները և ունեք երեխաներ, դուք չեք ստանա ձեր երեխայի գումարը մինչև եկող տարի, բացի եթե դուք լրացնեք նոր միջոց ստանալու դրամը ձեր և ձեր երեխաների համար՝

<https://www.irs.gov/coronavirus/non-filers-enter-payment-info-here>

Եթե, դուք ստանում եք Սոցիալական Անվտանգության Կենսաթոշակ կամ Disability-ի կամ Railroad-ի օգնություններ, ձևը լրացնելու վերջնաժամկետը Ապրիլի 22-ի ժամը 9-ն է Սոցիալական Անվտանգության Կենսաթոշակի և Disability (SSDI) և Railroad-ի օգնությունների համար:

SSI-ի և Veteran-ի օգնությունների ձևը լրացնելու վերջնաժամկետը դեռևս չի հայտարարված, բայց շուտով կլինի: Ֆայլ արեք հնարավորինս շուտ:

## Ես իրավասու՞ եմ ստանալու stimulus check:

**Ես կարիք ունե՞մ ունենալու սոցիալական ապահովության համար, որպեսզի ստանամ չեքը:**

Այո: Եթե դուք ֆայլ եք անում միասին ձեր կնոջ կամ ամուսնու հետ, դուք և ձեր կինը կամ ամուսինը պետք է երկուսով էլ ունենաք սոցիալական ապահովության համարներ:

**Կարո՞ղ եմ ես դիմել իմ երեխաների համար, եթե ես չունեմ սոցիալական ապահովության համար:**

Ոչ: Եթե դուք չունեք սոցիալական ապահովության համար, դուք չեք կարող դիմել ձեր երեխայի stimulus check-ի համար: Ձեր չափահաս երեխան միզուցե կարողանա ստանալ Stimulus Check, եթե նրանք ունեն սոցիալական ապահովության համար և չեն լինի կախված անձ 2020 թվականին:

**Կարո՞ղ եմ ես ստանալ stimulus check-ը, եթե ես ներկայացվել եմ որպես կախյալ անձ:**

Դուք հնարավոր է ստանաք stimulus check, եթե դուք չեք ներկայացվել որպես կախյալ անձ 2020 թվականին: Դուք չեք համարվի կախյալ անձ, եթե դուք ստանում եք ձեր ապրուստի կեսից ավելին: Տեսեք այստեղ սովորելու թե արդյոք դուք կախյալ անձ եք թե՛ ոչ,

[www.irs.gov/help/ita/whom-may-i-claim-as-a-dependent](http://www.irs.gov/help/ita/whom-may-i-claim-as-a-dependent) .

**Ես ունեմ ընտանիքի անդամ բանտում, նրանք իրավասու՞ են:**

Այո: Հաստատությունում ապրող մարդիկ կարող են ստանալ stimulus check:

## Պե՞տք է ես անհանգստանամ:

**Ես պե՞տք է ետ վճարեմ դրամ, եթե ես ստացել եմ ավելի այս տարի քան անցյալ տարի:**

Ոչ:

**Stimulus Check-ը կապակասեցնի՞ իմ կանխիկ օգնությունը, առողջապահական խնամքը, կամ ուսելիքի օժանդակության օգնությունները:**

Ոչ: Եթե դուք ծախսեք stimulus գումարը 12 ամիսների ընթացքում, դա չի ազդի ձեր Cal-Fresh-ի, SSI-ի, School Meals-ի, Medi-Cal-ի, WIC-ի կամ CalWORKs-ի օգնություններին:

**Ես քիչ գումար ետ կստանա՞մ իմ 2020 թվականի եկամուտներից, որովհետև ես ստացել եմ stimulus check:**

Ոչ: Stimulus check-ը 2020 թվականի եկամուտի քրեդիթ է, որը դուք ստանում եք մինչև 2020 եկամտահարկերի ֆայլ անելը: Սա չի փոխի ձեր իրավասու լինելը՝ ստանալու համար քրեդիթներ 2020 թվականի եկամտահարկերը ֆայլ անելու ժամանակ:

## Ինչպե՞ս են պարտքերը և վարկերը ազդում իմ stimulus check-ին

**Ես պարք եմ երեխայի ապրուստավճար: Կվերցվե՞ն դրանք իմ չեքից:**

Այո: Ձեր եկամտահարկի քրեդիթը կվերցվի ձեր երեխայի ապրուստավճարի պարտքից և կվճարվի ծնողին, որին դուք պարք եք: Վճարումը կպակասեցնի ձեր պարտքի գումարի չափը երեխայի ապրուստավճարի համար:

**Ես պարտք եմ ուսանողական վարկեր: Դրանք կվերցվե՞ն իմ չեքից:**  
Ոչ:

**Ես որևէ մեկին գումար եմ պարտք: IRS-ը կտա՞ իմ stimulus check-ը նրանց:**

Ոչ: IRS-ը չի տա ձեր stimulus գումարը որևէ մեկին ում դուք գումար եք պարտք, ձեր պարտքի համար: IRS-ը կվերցնի գումար ձեր չեքից միայն, եթե դուք պարտք եք երեխայի ապրուստավճար:

Եթե դուք դատվել եք դատարանում և դատավորը հրամայել է ձեզ վճարել անձնավորությանը կամ բիզնեսին, այդ դեպքում անձնավորությունը կամ բիզնեսը կարող են վերցնել գումար ձեր բանկի հաշվից (“levy it”): Եթե ձեր stimulus check-ը դրվի ձեր բանկի հաշվին, այդ անձը կամ բիզնեսը հնարավոր է կարողանան ստանալ ձեր stimulus գումարից որոշակի մաս: Դուք կարող եք կանգնեցնել որ դա պատահի՝ պահանջելով IRS-ից փոստով ուղարկի ձեր չեքը ձեզ: Դա միգուցե երկար տևի ստանալու ձեր չեքը, եթե դա ուղարկվի ձեզ փոստով:

**Ի՞նչ անեմ ես, եթե իմ Stimulus Check-ը վերցվել է բանկի կողմից և ես գումարի կարիք ունեմ իմ տան վարձի և ուտելիքի համար:**

Եթե ձեր stimulus check-ը վերցվել է բանկի գանձման միջոցով, որովհետև դուք պարտք եք որևէ մեկին գումար, դուք կարող եք փաստաթուղթ ֆայլ անել դատարան ստանալու ետ գումարը: Դուք կլրացնեք այս երկու ձևերը՝ (1) Claim of Exemption (form [WG-006](#) ); և, (2) Financial Statement (form [WG-007](#) ).

## Եթե ես կարի՞ք ունեմ օգնության:

Որտեղի՞ց ես կարող եմ ստանալ օգնություն ֆայլ անելու իմ եկամտահարկերը: Եթե դուք ստացել եք ավելի քիչ քան \$69,000 2019 թվականին, դուք կարող եք ֆայլ անել ձեր եկամտահարկերը առցանց անվճար՝ <https://apps.irs.gov/app/freeFile/>.

Կրկն կարող եք գտնել օգնություն անձամբ (after Safe at Home Orders are lifted) հասցեում՝ <https://freetaxprepla.unitedwayla.org/en/>

Ի՞նչ կլինի, եթե նրանք ուղարկեն իմ Stimulus գումարը հենց ինձ համար, բայց ես ունեմ երեխա ով ապրում է իմ հետ: Կրկն կարող եք գնալ IRS-ի կայքէջը և ավելացնել երեխային ձեր Stimulus Check-ին: Նրանք միգուցե ուղարկեն դա առանձին՝ <https://www.freefilefillableforms.com/#/fd/EconomicImpactPayment>

**Ի՞նչ կլինի, եթե ես 2018 և 2019 թվականներին օգտվել եմ եկամտահարկ պատրաստողից և չեմ ստացել stimulus check-ը:**  
Կապնվեք IRS-ին պարզելու, թե ձեր չեքը ուղարկվել է ձեր բանկի հաշվեհամարին կամ տարբեր հաշվեհամարին կապված ձեր եկամտահարկ պատրաստողին: IRS-ի թեժգիծի համարն է 1-800-829-1040. Եթե IRS-ը ասի, որ չեքը ուղարկվել է կամ դրվել է սխալ բանկի հաշվի վրա, զանգահարեք իրավաբանական ծառայություններ օգնության համար:

NLSLA | 

Անվճար իրավաբանական օգնության համար զանգահարեք (800) 433-6251



(213) 487-7211  
COVID-19 ռեսուրսների մասին և  
րացուցիչ տեղեկություններ  
ստանալու համար տե՛ս [այստեղ](#):